ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2016թվականի N 54

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26--րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Քանաքեռավանի Արվեստի դպրոց ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՆԿԵԼ
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐԳՈԺԱ
5. ՊԱՅՏԱՆ ԿԱՐԴԳԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Քանաքեռավան համայնքի
ավագանու 2016թ. Օգոստոսի 31-ի
թիվ 54 որոշմամբ

«ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Քանաքեռավանի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև՝ կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Քանաքեռավանի համայնքի անունից՝ համայնքի որոշմամբ, եվ հանդիսանում է «Քանաքեռավանի մանկական արվեստի դպրոցի» իրավահաջորդը: Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:
1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, «Կրթության մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
1.3 Հիմնադրի եվ կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ: Քանաքեռավանի համայնքի անունից կազմակերպության կառավարումն իրականացնող մարմին հանդիսանում է Քանաքեռավանի համայնքի ղեկավարը, որի ենթակայությանն է հանձնվում կազմակերպությունը:
1.4 Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք եվ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:
1.5 Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:
1.7 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով եվ կազմակերպության հայերեն անվանմամբ կլոր կնիք, որոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
1.8 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:
1.9 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:
1.10 Կազմակերպության անվանումն է՝

- Հայերեն- «Քանաքեռավանի արվեստի դպրոց» համայնքային ոչ առեվտրային կազմակերպություն:

1.11 Կազմակերպության հասցեն՝ Կոտայքի մարզ, Քանաքեռավան համայնք
, 13փ.4-րդ նրբանցք, շենք 1:

2.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպությունը ստեղծվում է մշակութային նախնական մասնագիտական կրթություն իրականացնելու համար: Կազմակերպությունը ուսումնական հաստատության տիպի արվեստի դպրոց է:
2.2 Դպրոցի նպատակներն են՝

- իրականացնել արվեստի տարբեր ձևերի նախնական մասնագիտական կրթություն.
- իրականացնել արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն.
- իրականացնել ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, նախապատրաստել օժտված և տաղանդավոր երեխաներին միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար.
- իրականցնել մշակութային և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում.

- բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի իրականացում:

2.3 Կազմակերպությունը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- համերգային գործունեություն
- ցուցահանդեսային գործունեություն.
- հրատարակչական գործունեություն

Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ոչ առևտրային կազմակերպությունը իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

2.4 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

2.5 Համայնքային բյուջեով կազմակերպության համար ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում կազմակերպության կողմից համայնքին մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով: Կազմակերպության կողմից համայնքի այլ ծառայությունների աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

2.6 Կազմակերպությունը՝ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

2.7 Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը և կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը:

3.2 Կազմակերպության հիմանադիրն ունի կազմակերպության գործունեության եվ կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա/ Կազմակերպության հիմնադրումը

բ/ Կազմակերպության գործունեության առարկային եվ նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը

գ/ Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:

3.3 Հիմնադիրը /համայնքի ղեկավարը/ իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

Քանաքեռավանի համայնքի ղեկավարը՝

ա/ հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող /կամ/ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմը.

բ/ ավագանու հաստատմանն է ներկայացնում կազմակերպության կանոնադրությունը և կանոնադրության փոփոխությունները.

գ/ սահմանում է կազմակերպության կառավարման համակարգը.

դ/ նշանակում կակազմակերպության լուծարման հանձնաժողով եվ հաստատում լուծարման հաշվեկշիռը.

ե/ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորման և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

զ/ իարականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը

է/ կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի ՀՀ օրենսդրության պահանջներին համակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

ը/ լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները

թ/ վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման եվ պահպանության նկատմամբ.

ժ/ վերահսկողություն է իրականցնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ,իսկ՝ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման և ձեռք բերման, կամ վարձակալության համար.

ի/ հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

լ/ հաստատում է կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը.

խ/ իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:
3.4 Կազմակերպության գործադիր մարմինը՝
ա/ Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում եվ պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի ու սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
բ/ Տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր, որը համայնքի անունից ստորագրում է Քանաքեռավանի համայնքի ղեկավարը:
գ/ Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:
դ/ Կազմակերպության տնօրենը պետք է ունենա մասնագիտական բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:
ե/ Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը պատճառած վնասի համար:
զ/ Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պարտավոր է չկատարել հիմնադրի՝ ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:
3.5 Տնօրենը՝
ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.
բ/ ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.
գ/ տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
դ/ աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր.
ե/ բանկում բացում է հաշվարկային հաշիվներ.
զ/ կատարում աշխատանքի բաշխում տեղակալների միջև.
է/ սահմանում է կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.
ը/ օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ ու հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներով վերահսկում դրանց կատարումները.
թ/ ապահովում է կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանց սահմանված կարգով ներկայացնում հիմնադրին.
ժ/ իրականացնում է օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:
3.6 Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով ձեվավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկային մեթոդական միավորումներ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության տնտեսական գործունեության վերակազմակերպման ժամանակ՝ հիմնադրի որոշմամբ սահմանված չափով հանձնված գույքից, հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնող, ինչպես նաեվ կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
4.3 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:
4.4 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
4.5 Հիմնադիրը կարող է կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:
Հիմնադիրն իրավունք ունի ետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:
4.6 Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացված եկամուտները կազմակերպության սեփականությունն են:
Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են հիմնադրի սեփականությունը:
4.7 Հիմնադրի կողմից գույքը կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այլ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:
4.8 Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ համայնքային պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի համայնքային գրանցման պահից:
4.9 Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրներն են հանդիսանում աշակերտի ուսման վարձից գոյացած գումարները, համայնքային նշանակության ծախսերին ամրագրված եկամուտներից հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից եվ սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այն գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներից, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային և ուսումնական գործունեությանը տրամադրված դրամաշնորհներից:
Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:
4.10 Կազմակերպության մանկավարժական, ուսումնաօժանդակ անձնակազմի եվ վարչատնտեսական աշխատողների թվաքանակը սահմանվում է նախահաշվով հաստատված աշխատավարձի ֆոնդի շրջանակներում:
4.11 Աշխատավարձի ֆոնդի սահմաններում կազմակերպությունը ինքնուրույն հաստատում է հաստիքային ցուցակը եվ գործող կարգի համաձայն սահմանում է պաշտոնական դրույքներ:
4.12 Վարչական, մանկավարժական և այլ աշխատողների աշխատավարձը հաշվարկելիս ի պաշտոնե աշխատավարձերը և տարիֆային դրույքները պետք է դիտվեն որպես երաշխավորվող վարձատրության նվազագույն չափ:
4.13 Կազմկաերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հիմնադիրը:
4.14 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի / վերստուգման/ հիմնադրի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

5. ԿԱԶՄԿԱԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմկաերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթը օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:
Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:
6.2 Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքը ուղղվում է համայնքային բյուջե:
6.3 կամակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք
ՀՀ,Կոտայքիմարզ, ք.Քանաքեռավան, (0224) 60029 qanaqeravan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՕԳՈՍՏՈՍԻ 2016թվականի N 55

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26--րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Քանաքեռավանի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ՄԱՆՎԵԼ
2. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԵՆ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
5. ՊԱՅԱՆ ԿԱՐԳԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հաստատված է
Քանաքեռավան համայնքի
ավագանու 2016թ. Օգոստոսի 31-ի
թիվ 55 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի մանկապարտեզը համայնքային ոչ-առեվտրային կազմակերպությունը՝ այսուհետ հաստատությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան ձեռք է բերում եվ իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքները եվ պարտականությունները:
2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եվ սույն կանոնադրությամբ:
3. Հաստատությունն գտնվելու վայրն է ՀՀ կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքը՝ 12փողոց, 1շենք (փոստային ինդեքս) 2414:
4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք եվ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:Հաստատությունը իրա անունից ձեռք է բերում եվ իրականացնում գույքային եվ անձնական ոչ-գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Հաստատությունը ունի Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով եվ իր հայերեն անվանմամբ կլոր կնիք կարող է ունենալ իր անվանմամբ ձեվաթղթեր, խորհրդանիշ եվ այլ անհատականացման միջոցներ:
6. Հաստատության անվանումն է Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ:
7. Հաստատությունը ունի ինքնուրույն հաշվեկշիռ եվ բանկային հաշիվ:
8. Հաստատությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հասնդիսանալ միայն հիմնադիր որոշմամբ:
9. Հաստատությունը ՀՀ-ի օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների եվ կազմակերպությունների հետ:
10. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական եվ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

11. Հաստատության գործունեության առարկան եվ նպատակը նախադպրոցական կրթական գործունեության իրականացումն է:

12. Հաստատության կրթական գործունեությունը իրականացվում է ի շահ անհատի, հասարակության եվ պետության:
13. Հաստատությունը համագործակցելով ընտանիքի հետ ապահովում է նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիրակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու եվ այդ հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալների ապահովումը, հաշվելու տարական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարական կանոններին, հայրենի բնության եվ բնապահպանության, պատմության եվ ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական եվ ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո եվ նվիրվածության զարգացման ձեվավորումը, աշխատանքային տարական կարողությունների եվ հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխագելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստում:
14. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության եվ մարդասիրության, հանրամատչելիության, ազգային եվ համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության եվ կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
15. Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական եվ սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների եվ ձեվերի ընտրության, ինչպես նաեվ նրանց կյանքի անվտանգության եվ առողջության պահպանման համար:
16. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադիրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

17. Հասստատության երեխաների համկազմի համալրման կարգը եվ խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:
18. Հաստատություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում:
Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան
19. Հաստատությունում կրթադաստիրակչական գործունեությունը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության եվ գիտության նախարարության կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան:
Հաստատությունը կարող է մշակել եվ նախարարության հետ համաձայնեցնելով՝ իրականացնել նաեվ նախադպրոցական կրթության նորարական ծրագրեր:
20. Հաստատություններն իրենց գործունեության ուղղություններին համապատասխան բաժանվում են՝

ա) իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր եվ ապահովում է երեխաների խնամքը.
բ) հատուկ մանկապարտեզ, երեխաների ֆիզիկական եվ հոգեբանական զարգացման շեղումների շտկման գերակայությամբ.
գ) առողջարանային մանկապարտեզ՝ սանիտարահիգիենիկ, կանխարգելիչ եվ առողջապահական ծրագրերի գերակայությամբ.
դ) մանկական կենտրոն, որն իրականացնում է նախադպրոցական ծրագրեր եվ ապահովում է երեխաների խնամքը.
ե) համալիր մանկապարտեզ, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական հաստատությունների մի քանի տեսակներ կամ խմբեր.
զ) կրթահամալիր, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական եվ այլ մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող մի քանի հաստատություններ.
է) մանկատուն, որն իրականացնում է ծնողազուրկ, ծնողական խնամքից զուրկ, սոցիալապես անապահով, անբարենպաստ ընտանիքների մինչեվ 6 տարեկան երեխաների խնամքը, դաստիարակությունը եվ ուսուցումը:

21. Հաստատության աշխատանքային ռեժիմը, երեխաների այնտեղ մնալու տեվողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման եվ սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան եվ տոնական օրերին, ինչպես նաեվ երեխաների ազատ հաճախումը հաստատություն:
22. Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման եվ սննդի որակի համար:
23. Առողջապահական մարմինները իրականացնում են կազմակերպամեթոդական աջակցություն հաստատության բուժսպասարկման գործընթացում:
24. Հաստատության մանկավարժական եվ սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

25. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:
26. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը եվ այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:
27. Հաստատության եվ ծնողների փախհարաբերությունները կարգավորվում են նրանց միջեվ կնքված պայմանագրով:
28. Երեխայի եվ հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:
29. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են միայն այն անձիք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավաժական որակավորում:
30. Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը

համապատասխան, հաստատության կանոնադրությամբ եվ աշխատանքային պայմանագով:

31. Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական եվ մանկավաժական բնույթի աշխատանքներ:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

32. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմանադիր, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսհետ՝ տնօրեն):

33. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը եվ կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

34. Հաստատության հիմնադիր բացառիկ լիազորություններն են՝

ա) ավագանու համաձայնությամբ հաստատության հիմնադրում,

բ) հաստատության գործունեության առարկայի եվ նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող եվ /կամ/ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ) հաստատության կանոնադրության հաստատումը եվ դրանում փոփոխությունների կատարումը.

ե) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

զ) հաստատության վերակազմակերպումը եվ լուծարումը.

է) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը եվ լուծարման հաշվեկշիռի հաստատումը.

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եվ սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը.

35. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը եվ պատասխանատվություն կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

36. Համայնքի ղեկավարը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձեվավորումը եվ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման եվ պահպանության նկատմամբ.

զ) համայնքի ավագանու որոշմամբ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում, համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները եվ տարեկան հաշվեկշիռը.

ը) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ.

37. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձեվավորում է խորհրդակցման մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի եվ ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծել ծնողական, հոգեբարձուների եվ այլ խորհուրդներ:

38. Մանկավարժական խորհրդում ներառվում են բոլոր մանկավարժները

39. Մանկավարժական խորհուրդն իրավասու է՝

ա) ընտրել եվ վերլուծել երեխաների ուսուցման եվ դաստիարակության ծրագիրը.

բ) ընտրել կրթադաստիարակչական գործընթացի բովանդակության մեթոդները եվ ձեվերը, երեխաների հետ տարվող աշխատանքների մեթոդական ուղղությունները.

գ) կազմակերպել լրացուցիչ ծառայություններ:

40. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ եվ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության եվ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

41. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը եվ կնքում է գործարքներ.

բ) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ) նախագահում է մանկավարժական խորհրդի նիստերը.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի եվ ավագանու որոշումներով եվ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

ե) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

զ) աշխատանքի նշանակում եվ աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին , նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ եվ նշանակում կարգապահական տույժեր.

է) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջեվ.

թ) օրենքով եվ սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ եվ վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի եվ սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն եվ անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժա) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշպանության եվ անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժգ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը եվ դրանք ներկայնացնում կառավարման մարմինների հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող եվ հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

42. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:
43. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝
ա) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.
բ) ապահովում եվ վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնանարարականների կատարումը.
գ) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի եվ արդյունքի համար.
դ) կազմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը.
ե) ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը եվ ընդհանրացնում այն.
զ) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.
է) կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:
44. Դաստիարակը՝
ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջությունը ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երեվակայությունը.
բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման եվ դաստիարակության համար.
գ) մշտական համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:
45. Երաժշտական ղեկավարը՝
ա) տիպային ծրագրին համապատասխան դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.
բ) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակաության հարցերի շուրջ.
46. Տնտեսական մասի վարիչը (տնտեսական աշխատանքի գծով տնօրենին օգնականը)՝
ա) կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի եվ սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
բ) մասնակցում է ճաշացուցակի եվ սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմանը.
գ) հետեվում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի եվ սարքավորումների վիճակին, միջոցներ ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային եվ կատարողական կարգապահության համար:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

47. Հաստատության սեփականությունը ձեվավորում է հաստատության հիմնադրման ժամանակ եվ հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնող, ինչպես նաեվ հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
48. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին եվ /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու եվ օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
49. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ՝ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

50. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
51. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:
52. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:
53. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:
Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ:Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման եվ տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
54. Հաստատությունը Հայաստանի Հարապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
55. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային եվ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
56. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.
ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.
բ) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության եվ օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.
գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված եվ հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:
57. Ծնողական վճարի գանձումը իրականացվում է սահմանված կարգի համաձայն: Լրացուցիչ ծառայությունների վճարի չափը կարգավորում է պայմանագրային հարաբերություններով:
58. Հաստատությունում հաշվապահական հաշվառումը եվ վիճակագրական հաշվետվությունը իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:
59. Հայաստանի Հանրապետության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենստրությամբ սահմանված կարգով:

VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

60. Հաստատությունը վերակազմակերպվում եվ լուծարվում է Հայսատանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: